

(1267—1286) օրով, իբր 1280ին համարել: Թ. 308 պէտք է փոխադրել 1334, վասն զի կը յընդի Ապուսայիզ զանին (1316—1335) ժ. արին: Թ. 809 կազմող Մամթէոս գրած է յիշատակագրութիւնը «լեանակողմ անապատի» մէջ, որ երուսաղէմի շրջակայքի մէջ է: Ուստի կարելի է զինքը նոյնացնել համանուն դարանաղցի Մամթէոսի հետ, որ 1318ին երուսաղէմ կը գտնուէր, մնացած է հոն աւելի քան երեք տարի եւ օրինակած է զբնակից (Մ. Ալաւուներ, Միարանք եւ այցելութեան հայ երուսաղէմի, 1929, էջ 251): Թ. 832 կարելի էր Թ. 417ին կից դեռնել: Իսկ Թ. 831 հաւանորէն ժ. գարու վերջին քառօրէկն է: Թ. 814 Յրա Միսիթարիէն է Միսիթար Ապարանեցի † 1410ին: Թ. 242, 243, 312 եւ 330 (վերջաւորութեան հատուած մը դուրս թողուած է, տե՛ս Սարգիսեան, Յուլիոս, Ա., էջ 698) Վահրամի որդի Գրիգոր գրիչի ձեռքին են գրուած 1325—1333 տարիներուն. սաոր գրչին է նաեւ Թեհրանի Թ. 3 անթուական ձեռագիրը: Ուշագրութեան արժանի է, որ Գրիգոր այս ձեռագիրը կտակած է «Կանչոյ Ս. Ստեփանոսի», ուսկից կրնանք թերեւս հետեւցնել, թէ Գրիգոր հայրենեօք Կանչեցի էր: Կանչեցի է նաեւ Թ. 442ի յիշուած Ստեփանոսը: Գրիգոր ունեցած է չորս եղբայրներ, որոնք վախճանած են 1325էն յետոյ, այս ինքն Անդրէաս, Սարգիս, Թորոս եւ Ստեփանոս: Անդրէաս թերեւս Թ. 790ի գրչին հետ նոյն ըլլայ. եւ Սարգիս որդին Վահրամայ, Տիրիմիզի Թ. 21 անթուական ձառնոցի գրիչը, Սարգիսի հետ. ուստի ամէնուն ալ գրչութեան տեղը հաւանորէն Ակնիւր:

էջ 746 «Ստեփանոս արեւելեան կաթողիկոս Հայոց» 1319ին պէտք է իմանալ Ալուանից համանուն կաթողիկոսը (1260—1323). համա. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, էջ 623—639, Թ. 152, 187, 226, 262, 272:

Որչափ ալ ջանք տարած է Սաշիկեան, Ժ. գարու Յիշատակարաններու հաւաքածոյք ձեռագիր եւ տպագիր աղբիւրներէ ըստ կարեւորն ամբողջական ընծայել, բայց եւ այնպէս, ինչպէս կը նկատեմ, այս ամբողջականութիւնը չէ յաջողած ձեռք բերել. մասամբ անձանոթ մնացած են իրեն կարգ մը աղբիւրներ, եւ մասամբ վրիպած է իր աչքէն թիւ մը յիշատակարաններու, որոնք

- գոյութիւն ունէին իրեն մատչելի ձեռագիրներու եւ տպագիր ցուցակներու մէջ: Աչքի տակ ունիմ 1301—1320 տարիները. պիտի նշանակեմ անտեսուածները:
- 1302 Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 617 (Ն. Ծնորհարոյ Ընդհանրական):
- 1303 Լարսեան, Վասպուրական, Թ. 35: — Տէր-Աւետիսեան, Ամենաիրկիչ, Թ. 26:
- 1304 Լոյս (Կ. Պոլիս), 1905, էջ 367: — Տէր-Աւետիսեան, Աւետարան Դուռուցի գիւղի:
- 1305 (°) Հանդ. Ամս. 1942, էջ 250—254: — Առաքել Դաւրիթեցի, էջ 625—626: — Բարխուդարեան, Արցախ, էջ 322:
- 1305 Տէր-Աւետիսեան, Ամենաիրկիչ, 78:
- 1307 Արաքս 1888, էջ 49—50: — Լոյս 1906, էջ 336:
- 1308 Պետ. Մատենագ. Թ. 1519, թղ. 297ա: — Վիեննա, Թ. 145. Յուլիոս, էջ 447 (ՉԺԸ կարգա 20Ը):
- 1308/9 Երեւան, Պետ. Թանգ. 542, էջ 468, 541, 593, 608, 328 եւ 618 (Վարդանի Մեկնութիւն Հնգամասնի):
- 1309 (°) Զարբանեկեան, Մատենագարան, 745. Փիլոնի Մնացորդք, Վենետիկ 1826, էջ 622:
- 1310 (°) Թորոս Աղբար, Բ., 348—349:
- 1313 Արձագանք 1888, էջ 131 = Տիրիմիզի, Թ. 10: — Արձագանք 1888, էջ 158:
- 1315 Լոյս 1905, էջ 638: — Սիրմէկեան, Հալպ, Թ. 17 (Յուլ. 50—51): — Թօփճեան, Յուլ., Ա., 77, 1բ: — Հանդ. Ամս. 1948, էջ 239: — (°) Երեւան, Պետ. Մատ. Թ. 1879, թղ. 3ա, 11ա, 16ա, 43բ, 223ա, 281բ, 286բ, 364ա:
- 1316 Մ. Արձագանքեան, Ստորագրութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ 1859, էջ 319—320: Յովսէփեան, Գարուէս, էջ 46, Տախա. ՀԶ:
- 1316 Ա. Տէր-Յովհաննէսեան, Պատմութիւն Ս. Երուսաղէմի, Ա., էջ 203:
- 1317 Երեւ. Թանգ. Թ. 13 (Յուլ. 20—21): — Անդ, Թ. 41 (Յուլ. 87): — Երեւան, Պետ. Մատ. Թ. 2682, թղ. 57ա:

- 1318 Վենետիկ, Թ. 266, թղ. 261ա: — Երեւան, Պետ. Մատ. Թ. 418, էջ 206—207, որ կը լրացնէ Թ. 182 Յիշատակարանը: — Ե. Շահադիզ, Պատմական պատկերներ, էջ 110—111: — Երեւան, Պետ. Մատ. 2104, թղ. 163բ: — Բագմալիպ, 1923, էջ 106:
 - 1319 Արարատ, 1904, էջ 39: — Tisserant, Յուլիոս Բորգեան ձեռագրաց, էջ 98—100: — Արեւելք 1892, Թ. 2566: — Բարխուդարեան, Ալուանից Երկիր, էջ 279: — (°) Թորոս Աղբար, Բ. 296: — Երեւան, Պետ. Մատ. 866, թղ. 6բ, 24բ, 84բ, 159ա, 192բ, 269բ:
 - 1320 Երեւան, Պետ. Թանգ. 88 (Աւետարան): — Восточныя замѣтки, Պետերբուրգ 1895 էջ 14:
- Այս համեմատութեամբ հնարաւոր պիտի ըլլար հատորիս մէջ ամփոփուած Յիշատակարաններու թիւ բարձրացնել առ նուազն 1000ի, առանց հաշուի առնելու Մեծ եւ Փոքր Հաւաքածուներու անտիպ յիշատակարանները:
- Յիշատակարաններու Հաւաքածոյք մը կազմած էր նաեւ Հ. Ղ. Ալիշան, զոր մտադիր էր Հ. Մ. Պոտուրեան նոր լրացումներով տպագրութեան յանձնել 40 տարի յարաջող. այդ Հաւաքածոյքը կը բովանդակէր Ժ. գարու համար իբր 450 Յիշատակարան (Սաշիկեան՝ 845): Երկրորդ Հաւաքածոյք մ'ալ պատրաստած է Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, որուն առաջին հատորը՝ Ե. Յովսէփեան, մամուլի տակ է արդէն:
- Մենք չնորհաւազուեցինք միայն կրնանք յայտնել Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտին, որ քաջալեր կ'ընէ Ս. Սաշիկեանի ձեռնարկելու այս գիտութիւնը գործին եւ ինամուած տպագրութեամբ լոյս հանած է Հայաստանի հատոր. իսկ Լ. Սաշիկեանի կը մարթնէր նոյն կորովով շարունակել աշխատանքը թե՛նք նոյն կորովով շարունակել աշխատանքը կազմելու ժ. եւ յաջորդ գարեւոր Յիշատակարաններու հաւաքածոյքը:

ԱՄԻՐՏՈՎՆԻ ԱՄԱՍԻՍԻ. Օգոստ Բժշկութեան (Բժիշկ Պուլիարի Սերաստացու խմբագրած): Ա. տպագրութիւն. ձեռագիրների բազմաթիւութեամբ, առաջաբանով, ծանօթութիւններով եւ բազմաթիւ խմբագրութեամբ Ստ. Մալխասեանց: Երեւան 1940, 80 մեծ, էջ ԼԳ + 580: Գին՝ 25 ռ.:

Հայոց պարձանք Ամասիացի Ամիրտով-յաթ Բժիշկին հոյակապ Երկասիրութիւններէն Անգլիտաց անպէտք լոյս տեսած էր խնամքով Կ. Բառմաշեանի 1926ին Վիեննա: Անոր երկրորդ մեծ գործը՝ Օգոստ Բժշկութեան հրատարակուած է Հայաստանի Ակադեմիայի Գիտութիւններու Ինստիտուտի հովանաւորութեան տակ Ստ. Մալխասեանցի խմբագրութեամբ 1940ին Երեւան, ինձ մատչելի կ'ընէ այս տարի միայն: Գործին կարեւորութիւնը կը յորդորէ զիս ծանօթացնելու զայն Ուսումնաթերթիս ընթերցողներուն համար:

Գիտուն հրատարակիչը, ինչպէս կը պատշաճէր, տուած է իր Առաջարանին մէջ Ամիրտովյաթի կարճատեւ կենսագրութիւնը, սակարկ մը անոր երկասիրութիւններու վրայ եւ ընդհանրապէս անոր անձին եւ գործերուն, յիշած նախորդ քննութեանց արդիւնքներու վրայ: Ինքն ալ կ'ընդունի, թէ «հաւանական է, որ նա (Ամիրտովյաթ) վախճանել է Ստ. Մալխասեանցի» 8 դեկտ. 1496: Բայց Պրոսա քաղաքում՝ Թ. 1921ի Յիշատակարան Մատենագարանի Թ. 1921ի Յիշատակարանը շատ մեկին խօսքերով կը հաւատէ, թէ Ամիրտովյաթ բախտը ունեցած է իր վերջին 5 տարիները անցնելու իր ծննդավայրին մէջ: Նորութիւն է մեզի համար, որ Պետ. Մատենագարանի ձեռագիրներու մէջ Երեւան կ'ընէ Ամիրտովյաթի առաջին երկը՝ Ուսումնա Բժշկութեան ինքնագիր, գրուած 1459ին Կ. Պոլիս: Ուշագիր կ'ընէմ, որ նոյն Բժշկին ինքնագիր օրինակութիւնն է նաեւ Պետ. Մատ. Թ. 266, թղ. 211բ—115բ (Բառք Գաղիանոսի):

Բնագրի վերականգնութեան համար նկատի առնուած են 6 ձեռագիր, որոնք կը ներկայացուին այսպէս.

Ա. Ուսումնա Բժշկութեան, յամէ 1459 (առանց համարի):

Զ. Պետ. Մատ. 414 (1626):

Բ. ,, ,, 732 (1754):

Գ. ,, ,, առանց համարի (ԺԸ):

Հ. Ն. Անիեմս

- Գ. Պետ. Մատ. 6275 (ԺԿ):
- Ե. " " 733 (1771):
- (Զ.) " " 734 (1783):

Խմբագիրը ձեռքի տակ ունեցած է Երկու ձեռագիր միայն, այն է «Ա» և «Զ»: Իսկ Բ-ն և «Զ» ձեռագիրներու բազմաթիվ օրինակներ կատարած են Բ. Ա. Մելիքեան և Բ. Լ. Յովհաննէսեան, որոնցմէ օգտուած է: Այս պատճառով ալ, ինչպէս ինձ կը թուի, չփոխութիւններ անցի ունեցած են ձեռագիրներու համարներու մէջ: Ինձի ծանօթ են Պետ. Մատենադարանի և Պետ. Թանգարանի հետեւեալ ձեռագիրները.

- Պետ. Մատ. 411 (1745) = Կար. 417.
- " " 414 (1626).
- " " 456 (1657) = Կար. 428.
- " " 460 (1682) = Կար. 431.
- Պետ. Թանգ. 732 (1754).
- " " 735 (1874).
- " " 740 (ԺԿ):

Այս ձեռագիրներէն Ա. հնագոյն խմբագրութիւնն է Ռուսումն Բժշկութեան հաստիւն, որ 1466—1469 տարիներուն նոր խմբագրութեամբ վերընծայուեցաւ. ուստի չէր կրնար համեմատութեան ժամանակ բնագիր անուելի: Իսկ Զ (Թ. 414) Պունիաթ Սերաստացոյ խմբագրութիւնն էր, որ Ամիրտով լաթի բնագիրը իր հարազատութեամբ չէր ներկայացներ: Այս կէտին անդրադարձած է Մալխասեան, երբ աւարտած էր բնագրին արտագրութիւնն մանր ուսումնասիրութեամբ: Պունիաթի խմբագրութեան մէջ Օգոստ Բժշկութեան մեծ փոփոխութիւն չէր կրած. բայց շատ համառօտուած էր Ռուսումն Բժշկութեան, որուն Յառաջարանին էական մասերը պահպանուած՝ ցոյց կու տան անոր բաժանմունքները: Այս ցուցմունքներու համաձայն կարելի էր վերակազմել նախնականը, եթէ ջանք տարուէր ձեռագիրներու մէջ ցրուած մասերը զտաւորել: Առ այս մեծապէս պիտի նպաստէր Ռուսումն Բժշկութեան իր առաջին խմբագրութեան մէջ, որ հետեւեալ տարիներն կը բովանդակէ.

- ա. Մարդակազմութիւն Ա.—ՄԸ. գլուխներով (էջ 1—92).
- բ. Ախրապատին յառաջարանով (էջ 93—198).

- գ. Մուֆրատար (էջ 200—352).
- դ. Դեղագրիք (էջ 354—359).
- ե. Խօսք վարդապետացի և Յիշատակարան (էջ 360—361).
- զ. Դեղագրիք (էջ 362—363):

Ա. Մասը (որ Պունիաթի խմբագրութեան մէջ ամփոփուած է Ա.—ԺԶ. գլուխներու մէջ) ունինք ՄԸ. գլուխներով Պետ. Թանգ. 630. Պետ. Մատ. 413, 10ա—35բ. 451, 1ա. 461, 1—183ա և Լազ. ձեմ. 85, 1ա: Բ. Մասը՝ Պետ. Մատ. 413, 37բ—109բ. 454, 42ա: Պետ. Թանգ. 630. Լազ. ձեմ. 85, 18բ:

Գ. Մասը՝ Պետ. Մատ. 412, 2բ—18բ:

Օգոստ Բժշկութեան մատենին Երկրորդ կարեւոր բաժինն է «Սառնուհի և թպտիրն ամենայն ցաւոց» (հրատ. էջ 103—523), որ Պունիաթի խմբագրութեան մէջ «Գիրք բժշկութեան տուժարի» վերնագիրը ստացած է: Յանկալի էր, որ գործին նկարագիրը ամբողջութեամբ պահուած ըլլար «տպերով» և աղիւսակներով:

Հրատարակութիւնն ունի կից լուսարանական ծանօթութիւններ (էջ 527—542) և Բաղդադի մը (էջ 545—578) այն օտար և ուսման բաւերու, որոնք յատուկ են Ամիրտովլաթի լեզուին և կը կարօտին մեկնութեան: Այս կէտին մէջ օգտակար եղած են իրեն ԲԺ. Սուրբուղ Մելիք-Փարսաղանեանի և դեղագործ Յակոբ Սեպետեանի կազմած Բառարանը Ամիրտովլաթի այս գործին մէջ կիրարկած գիտական բաւերու:

Մալխասեան ձեռնարկած է պատրաստել աշխատութիւնս իր յառաջացած տարիքին: Ծերունի գիտնականէն աւելին չէինք կրնար պահանջել: «Ես չինայեցի, կը գրէ, ոչ ժամանակ և ոչ ջանք՝ ըստ կարելոյն կատարեալ գործներու այս աշխատութիւնը. բայց լաւ գիտակցում եմ, որ նա հետո է կատարեալ լինելուց». նման աշխատութեան համար «բացի ուրիշ պատրաստութիւնից» պէտք է նաև միտամանակ լինել և արարողէս և բժիշկ, մանաւանդ դեղագրան: Ես գուրկ եմ այս գիտութիւններէ» (էջ ԼԶ): Աւելին ընել կը մնայ մասնագէտներուն: Իսկ այս հրատարակութիւնը պիտի դիւրացնէ այդ աշխատանքը:

Ն Ո Ր Հ Բ Ը Տ Ը Բ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած խմբագրութեան):

- Տէր-Միլանեան Ա., Գիրք և Երգիծանք: Իսթանպուլ, տպ. Տէր-Սահակեան, 1950, 8⁰, էջ 176: Գինն՝ 250 դր.: Billur sokak 14, Galata.
- Կեանքի գրուածքներ: Իսթանպուլ 1949, 8⁰, էջ 174: Գինն՝ 250 դր.:
- Տէր Միլանեան Նազեմի, Վարդենիք (1947—1950): Փարիզ, տպ. Տէր-Յակոբեան, 8⁰, էջ 160:
- Տէրաբեան Եղիշէ Վրդ., Ակամայ անդրադարձութիւնք Տ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կարգիւնալին իր Հովուական Թուղթերուն առիթով: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1950, 8⁰, էջ 42:
- Տիմանեան Բ., Բժիշկի մը խորհրդածութիւնները: Իսթանպուլ 1941:
- Տիմա Աղեքանդր, Դամբանին գաղանիքը: Աղեքանդրի, տպ. Ա. Ստեփանեան, 1939, 8⁰, էջ 60: Գինն՝ 14 Ե. դ.: [Մատենաշար Արաքս, Թ. 22:]
- Տոկապետեան Պետրոս (Վաղիմակ), Հայաստան և Հայ Ժողովուրդը գարեթի միջով: Երուսաղէմ և պատանեկուհի շատոր Ա: Մանկութիւն և պատանեկուհի թիւն: Փարիզ, տպ. Թիւրապեան, 1947, 8⁰, էջ 447:
- Հայաստան և Հայ Ժողովուրդը գարեթի միջով: Հատոր Բ. Բանտ և աղարկութիւն: Փարիզ, տպ. Թիւրապեան, 1949, 8⁰, էջ 479:
- Տօնացոյց 1947: Սր. Սալ Հայ կաթողիկէ եկեղեցի: Բարիզ 1947:
- Անդ, 1948:
- Անդ, 1949:
- Տօնացոյց Արտաշէս, Սրտի Արեւիկներ: Հարկ 1948: Առիւծապատում: Իսթանպուլ 1949:
- Փաշկեան Ս. Յ., 265 ազգեցիկ վկայութիւններ: «Մարանաթայ»էն հաւաքեց և գատարեց —: Հարկ, տպ. Մարանասարկ —: Հարկ, տպ. Գինն՝ 50 սէնթ: Թա, [1951⁰], 8⁰, էջ 56: Գինն՝ 3 Ե. դ.:
- Փարսաղան ԲԺ. Ստ., Օրորոցի երգը. մերօրմա 5 գործ. 6 պատկեր: Շատոր, տպ. Մաշտոց, 1947, 8⁰, էջ 65:
- Փափագեան Վահան, Իմ յուշերը: Ա. Հարար, տպ. Մաշտոց, 8⁰, էջ 599:
- Փափագեան Վրդ. Երվանդ, Մանկութեան յուշերէն: Պետրոս, տպ. Հայրենիք, 8⁰, էջ 599:
- Քարէլ Ալ. Տօֆր., Աղօթքը, թարգմ. Ս. Պալլաճեան: Գահիրէ, տպ. Սահակ-Միսրոպ, 1948, 8⁰, էջ 24:
- Քէչեան Ա. Մ., Կարմիր գրուածքներ հերոսներու կեանքէն, 1915—1918, հատոր Բ:

- Պուրէշ, տպ. Հայ Մամուլ, 1939, 8⁰, էջ 139: Գինն՝ 100 լէյ: Հայտ՝ Şos Jan- cului 59, Bucureşti 4.
- Հատոր Գ., անդ, 1940, 8⁰, էջ 136: Գինն՝ 100 լէյ:
- Քլաուսըր Սթօրըր, Սեւագեա լրտեսը, վէպ պատմական և ոստիկանական կեանքէ: Թրգմ. Յ. Արսլանեան: Աղեքանդրի, տպ. Ա. Ստեփանեան, 1928, 8⁰, էջ 190: Գինն՝ 5 Ե. դ.: [Մատենաշար «Արաքս», Թ. 1:]
- Քօֆա Մամուլ Սալիվան, Հօր մը Կապը, թրգմ. Ն. Փաղուճեան: Աղեքանդրի, տպ. Ա. Ստեփանեան, 1932, 8⁰, էջ 39—52:
- Օղային յարձակումներ և կաղերու դէմ պաշտպանութիւնը: Աղեքանդրի, տպ. Ստեփանեան, 1938, 8⁰, էջ 36:
- Օրացոյց: Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1949, 16⁰, էջ 288: Գինն՝ 15 զահան:
- Ֆերիաբեան Հ. Բ., Դժոխքի Ուխտաւորը: Պէյրութ, Հայ կաթ. տպ., 1948, 8⁰, էջ 121: [Հրատարակութիւն «Մասիս» շաբաթաթերթի Թ. 1:]
- Երկրի տպերը: Պէյրութ, տպ. Հայ կաթողիկէ, 1949, 8⁰, էջ 209: Գինն՝ 100 լ. դ.: [Հրատ. «Մասիս» Թ. 3:]
- Ֆիլիթ ժագ, Անդրանիկ, գրուածքներ տղային հերոսի կեանքէն: Թարգմ. Շաղապուր Ա. Ստեփանեան: Աղեքանդրի, տպ. Ա. Ստեփանեան, 1929, 8⁰, էջ 262: [Մատենաշար «Արաքս» Թ. 6:]
- Ֆրանկիլիեան Անուշաւան, Հերովդէս: Պէյրութ 1951, 8⁰, էջ 60:
- Ֆրանսուայի Համախորհրդակցական Միութեան Պատի Օրացոյց, 1948, 1949, 1950, 1951 տարիները:
- Ֆրօման Մարիուս, Շակար էլ Տճուր, Հայկական ծագումէ՝ Եգիպտոսի առաջին Սուլթանութիւն: Թարգմ. Տօրթ. Ե. Արշա- ռունի: Աղեքանդրի, տպ. Ա. Ստեփանեան, 1937, 8⁰, էջ 32: Գինն՝ 3 Ե. դ.: [Մատենաշար «Արաքս» Թ. 21:]
- Ֆօկ Դանիէլ տը, Ռոպինտոն Բրուգօ, իր կեանքն ու արկածները: Պէյրութ, տպ. Համագգ. Ընկ. 1950, 8⁰, էջ 203: Գինն՝ 160 լ. դ.: [«Համագգայիներ» Մանկական- պատանեկան Մատենաշար, Թ. 5—6:]
- A Memorandum on the Armenian Question. Presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947. New York, 1947, 8⁰, 23 pp.
- An Appeal to the United Nations. New York, 1947, 8⁰, 11 pp.